# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

## ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ Արարատ համայնքի շրջանավարտներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ կյանքի ամենահիշարժան իրադարձություններից մեկի՝ Վերջին զանգի կապակցությամբ: Տարիներ շարունակ դպրոցը ձեզ համար եղել է կրթման, դաստիարակման և արժեքների ձևավորման յուրատեսակ դարբնոց: Ուսումնառության այս տարիների ընթացքում դուք շրջապատված եք եղել մանկավարժների ջերմությամբ, ընկերների մաքուր և անաղարտ սիրով, դպրոցում ձեզ սովորեցրել են լինել ազնիվ, բանիմաց, երկրին ու հայրենիքին նվիրված քաղաքացիներ:

Համոզված եմ, որ դուք ոչ միայն պահպանելու եք այն արժեքները, որոնք բազում դժվարություններ հաղթահարելով, դարեդար անցնել ու ձեզ են փոխանցվել ձեր ուսուցիչների, ծնողների շնորհիվ, այլև հարստացնելու և նոր որակներ եք հաղորդելու այդ ամենին: Այսօր ձեզ համար օրվա գլխավոր խոհուրդը ոչ միայն դպրոցական տարիների ավարտն է, այլև կյանքի առավել պատասխանատու նոր փուլի մեկնարկը:

Շնորհավորանքի և հիացմունքի խոսքեր եմ ուզում ուղղել նաև մեր մանկավարժներին և ձեր ծնողներին՝ հույս հայտնելով, որ դուք իրականություն կդարձնեք ձեզ հետ կապված նրանց բոլոր երազանքները:

Սիրելի՛ շրջանավարտներ,

Մաղթում եմ ձեզ բարի երթ դեպի մեծ կյանք՝ համոզմունքով, որ կիրականացնեք նվիրական ձեր բոլոր երազանքները՝ ի շահ մեր երկրի ու ի բարօրություն մեր համայնքի վաղվա օրվա:

Ես լիահույս եմ, որ ձեր շնորհիվ մեր համայնքի կենսագրության մեջ ապագայում գրվելու են նոր և ավելի փառահեղ էջեր:

Բարի երթ ու կանաչ ճանապարհ ձեզ, սիրելի՛ շրջանավարտներ...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ